Հայտարարություն

մասնագիտական պաշտոնների 6-րդ ենթախմբի թափուր պաշտոնը համալրելու համար մրցույթ հայտարարելու մասին

ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը հայտարարում է մրցույթ ֆինանսատնտեսական վարչության մասնագետի պաշտոնը համալրելու համար (ծածկագիր՝ 42-27.1-Մ6-1) և վարկանիշային ցուցակի համապատասխան համարներում գրանցված անձանց հրավիրում է հարցազրույցի, որը տեղի կունենա 2020 թվականի օգոստոսի 20-ին, ժամը 11^{00}-ին ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի վարչական շենքում (ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Գ.Քոչար 21ա):

Քաղաքացիական ծառայության նշված թափուր պաշտոնի անձնագրի (ծածկագիր՝ 42-27.1-Մ6-1) էլեկտրոնային տարբերակին կարող եք ծանոթանալ այստեղ:

Հարցազրույցին հրավիրվող անձը հարցազրույցի օրը պետք է ներկայացնի հետևյալ բնօրինակ փաստաթղթերը՝

1) *անձնագիր (ՀԾ համարանիշ).*
2) *դիպլոմ.*
3) *աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթուղթ (առկայության դեպքում)*
4) *արական սեռի անձինք՝ զինվորական գրքույկ կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասից զինվորական կցագրման վկայական կամ համապատասխան տեղեկանք:*

Հարցազրույցը կանցկացվի «Հարցարան» ձևաչափով:

Հիմնական աշխատավարձի չափը կազմում է՝ 111 115 ՀՀ դրամ:

Նշված պաշտոնին հավակնող անձը պետք է լինի բարեկիրթ, պարտաճանաչ, հավասարակշռված, ունենա նախաձեռնողականություն և պատասխանատվություն ստանձնելու կարողություն:

Աշխատավայրի հասցեն է՝ ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Գ.Քոչար 21ա:

Վարկանիշային ցուցակում գրանցված անձանց հարցազրույցի հրավիրելու համար տեղեկացնելու վերջնաժամկետի օրն է՝ 2020 թվականի օգոստոսի 17-ը:

Անհրաժեշտ տեղեկությունների համար կարող եք զանգահարել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անձնակազմի կառավարման բաժին՝ 010-54-52-47 հեռախոսահամարով, կամ ուղարկել հաղորդագրություն cec@elections.am էլեկտրոնային փոստի հասցեին:

12 օգոստոսի 2020թ.